ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- օգոստոսի 2021 թվականի №---Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի №302Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, այդ թվում՝ կարգի 78-րդ կետը, կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը և հաշվի առնելով «ԱՏԼԱՍ-ՊԼՅՈՒՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի հուլիսի 23-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի օգոստոսի 14-ի «ԱՏԼԱՍ-ՊԼՅՈՒՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Էրի Ձոր» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №302Ա որոշմամբ «ԱՏԼԱՍ-ՊԼՅՈՒՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0651 լիցենզիայով ամրագրված «Էրի Ձոր» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգել 1 տարի 5 ամսով, ճշգրտելով նաև արտադրության ժամանակահատվածը՝ որոշման մեջ «մինչև 2021 թվականի օգոստոսի 15-ը» բառերը փոխարինելով «մինչև 2023

թվականի հունվարի 15-ը» բառերով, իսկ «մինչև 2036 թվականի օգոստոսի 15-ը» բառերը՝ «մինչև 2038 թվականի հունվարի 15-ը» բառերով:

2. «ԱՏԼԱՍ-ՊԼՅՈՒՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ԼԷ №0651 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Էրի Ձոր» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

1) մեկամսյա ժամկետում «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի հուլիսի 19-ի №01-726 գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացված №194614100 բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված 2 475 000 (երկու միլիոն չորս հարյուր յոթանասունհինգ հազար) դրամ գումարից 1 237 500 (մեկ միլիոն երկու հարյուր երեսունյոթ հազար հինգ հարյուր) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) քառասունհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել 2 475 000 (երկու միլիոն չորս հարյուր յոթանասունհինգ հազար) դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2023 թվականի մարտի 1-ը գործողության ժամկետով:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի օգոստոսի 15-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- օգոստոսի 2021թ.